

ՀԱՅՈՒԹԻՒՆ

ԵԼԿԱԿԱՐՔԻ և ԱԺԴԽՈՅՔԻ
ԿՐՈՒՅՑ 1908թ.



20 JUN 2006

19 NOV 2010

$$\begin{array}{r} 88 - 13 \\ \hline 75 \end{array}$$


ՀԱՄԵՐՈՍ

88
2-48

四

ՀԵԿՏՈՐԻ ԵՒ ԱԳԻԼԱԵՍԻ

Կ Ո Ւ Ի Ւ Ը



Թարգմանութիւն ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

A decorative horizontal line featuring a central four-pointed star or snowflake-like motif, flanked by smaller circular and floral elements.

ՎԱՂԱՐԺԱՊԱՏ

Տպարան Արքոյ Էջմիածնի

1908

12.06.2013

8932

ԱՆ318

88
Հ-78

ՀԵԿՏՈՐԻ ԵՒ Ա.ՔԻԼՀԵՍԻ ԿՈՒԻԼԸ

(Թարգմանութիւն Հոմերոսից)

(Նուիրում եմ պ. Սեղրաբ Մանդինեանին)

Իսկ Աքիլլէսն հասաւ նրան
Կերպարանքով Արէսի պէս՝ սաղուարտախրոխտ մաքառողի.
Պելիոնեան ահեղ նիզակն իւր աջ ուսին խաղացնելով.
Նրա վրայ պղինձը վառ չող էր տալիս փայլակի պէս,
Յ կամ ինչպէս հուր բոցավառուած և կամ արև ճաճանչափայլ
Դողաց Հեկտորն, երբ այդ տեսաւ, նա սիրտ չարաւ մնալ
այնտեղ,

Այլ իւր յետե թողեց դռներն ու սարսափած փախաւ հեռուն.
Ու յետեից թռաւ Պելիեան՝ յուսալով իւր վարժ ոտքերին:
Ինչպէս օգում ճախրողներից արագասուր ցինը սարում

10 Թեթեաթոիչ վազ է տալիս դէպի վախկոտ մի աղաւնի
Շուտ-շուտ փախչող այս ու այն կողմ, ու ճչալով մօտ է գալիս
Եւ յարձակում յաճախ վերան՝ շուտ բռնելուց խրախուսուած,
Աքիլլն այդպէս առաջ թռաւ նրա յետից. սա պարսպի
Երկարութեամբ վազ էր տալիս և իւր ծնկներն արագ շարժում:

15 Դիտանոցի և զովաշունչ մոլաթզենու մօտով նոքա
Միշտ պարսպից դէպի այն կողմ վազում էին արահետով.
Եկան, հասան գեղեցկարուղիս աղբիւրներին, ուր պղպջալով
Սկամանդրոսի երկու սիրուն առուներն են հոսում յորձուտ.
Բղխում է մին ջերմախառն, և նրանից շոգին ելնում,

20 Շուրջն է պատում, ինչպէս ծուխը բոցավառուած հրոյ միջից:
Միւան հոսում ամառը պաղ՝ ինչպէս կարկուտ գարնանային
Կամ ձմրան ձիւն, կամ թանձրամած և հաստաշերտ սառցի կտոր:
Նրանց մօտիկ կային այնտեղ լայն, ընդարձակ աւազաններ,
Գեղատեսիլ ու վիմատաշ, ուր որ իրենց տօնազգեստներ

25 Լուանում էին տրովեան կանաք և դուստրներ չքնաղագեղ:
Խաղաղութիւնն էր երբ տիրում և պայեանք չէին եկել
Վազում էին դէպի այնտեղ՝ փախուտ տուողն ու հալածող.
Առաջից մի քաջ էր վազում և քաջագոյնն էր հալածում.
Կինդանի կամ ցիկ կաչի չէին դրել կէտ նպատակ,

30 Ինչպիսի մրցանակներ դնում են վազող մարդկանց համար,
Այլ ձիավարժ այն Հեկտորի կեանքի համար էր արշաւանք:
Ինչպէս փութով գուպարայաղթ, սալասմբակ երիվարներ
Նշանի շուրջ վազ են տալիս, և կայ դրուած մեծ մրցանակ՝

Արտատպած Արարատ Ամսագրից
1908 թ.

10
90
80
70
60

Եռոտանի կամ սիրուն կին՝ կռւում մեռած քաջին պատիւ,
 35 Այնպէս ահա Պրիամոսի քաղաքի շուրջ սրաթև ոտքով
 Բոլորեցին երեք անգամ. և աստուածներն հանդիսատեն:
 Սկսեց նոյցա աստուածների և մարդկանց հայրն ասել այսպէս.
 «Ո՞վ աստուածներ, սիրելի մարդն հալածական պարսպի
 շուրջն»
 Իմ աչքերով տեսնում եմ ես, մորմոքում է սիրոս ու հոգիս
 40 Հեկտորի վրայ, որ ճնճերեց արջանների շատ ազդրեր ինձ
 Բաղմահովիտ իդա լիրան սէդ գագաթին, այլ անգամներ
 Բարձր և ամուր քաղաքի մէջ. քաղաքամարտ Աքիլլը արդ
 Պրիամոսի ոստանի շուրջ սրբնթաց ոտքով նեղում է նրան:
 Բայց ճն, աստուածք, ձեր սրտերում դուք մի վճրս արդ
 խորհեցէ,
 45 Թէ արդեօք նա պիտ խուսափի մահուան ձնոքից, թէ Պե-
 լիսեան
 Աքիլլէսին թողնենք, որ այն քաջին ընկճէ իւր զօրութեամբ»:
 Նրան Զեսի խստակ դուստր Աթենասը պատասխանեց.
 «Ամպաթնւխ հայր, կայծակնացու, այդ ինչ խօսքեր ասացիք
 դու.
 Մահկանացու ծնուած մարդուն՝ վազուց մահուան ճակա-
 տագրած,
 50 Կուղես մահուան աղէտալից զօրութիւնից այժմ փրկել.
 Արա այդպէս, միւս բոլոր աստուածներս չենք համաձայն:
 Ապա նրան ամպրոպային Զեսը այսպէս պատասխանեց.
 «Սիրտ առ, կառափնածին, սիրուն դստրիկ, ոչինչ սրտանց
 Զեմ ասում ես և դէպի քեզ քազցը լինել եմ ցանկանում.
 55 Արա այնպէս, ինչպէս որ այդ հաճոյ է քեզ. մի լար այդպէս:
 Զեսն այս ասաց և էլ յուղեց բորբքուածին՝ աստուածուհուն.
 Ուժգին թոփչով սա ցած թուաւ բարձրապառաժ Ոլիմպոսից.
 Իսկ Հեկտորին նեղում էր միշտ վանողն Աքիլլ վազելու մէջ,
 ինչպէս բարակն է հալածում լիոների մէջ մի եղնորթի,
 60 Քնատեղից արթնացնում, ձոր ու անտառ վազ է տալիս.
 Խեղճը թէն պաշտպանուելով՝ մացառների տակն է պահւում,
 Բայց խուղարկուն վազում է միշտ նրա յետեից՝ մինչև դանի.
 Հեկտորն այսպէս շթագնուեց քաջայարձակ Աքիլլէսից:
 Որքան յաճախ նա դիմելով դէպի դոներ Դարդանէսեան՝
 65 Բարձրակատար աշտարակաց շուրջն էր վազում արշաւասոյր,
 Որ թերես նրան պահէր տրովացոց նետը վերից,
 Վանողն այնքան աճապառում, դէպի դաշտն էր քշում նրան.
 Բայց նա կրկին յետ դառնալով՝ դէպի քաղաքն էր սլանում:

ինչպէս որ մարդ երազի մէջ փախչողին զուր հալածում է,
 70 Զի կարենում սա փախուստ տալ նրա ձեռքից, ոչ նա բանել,
 Այնպէս նրան վազելու մէջ ոչ սա բռնեց, ոչ նա փախու:
 Հեկտորն ինչպէս պիտ ազատուէր և՛ օրհասից, և՛ մահուանից,
 թէ մօտ չգար վերջին անգամ Ապօլլոնը հրամայող,
 Որ նորոգեց նորա կորով ու ծնկները արագաշարժ:
 75 Իսկ դիւցազարմ Աքիլլիսը սաստում զլիով զինուորներին,
 Որ դառնաթոյն իրենց նետեր էլ չձգեն դէպի Հեկտոր,
 Գուցէ պատիւ խոցողն առնի, և ինքն յանկարծ երկրորդ լինիւ
 Իսկ երբ նոքա չորրորդ անգամ հասան ցայտող աղբիւրներին,
 Նախախնամող Զեսը վերցրեց ոսկի կշռ՝ բարձրացրեց,
 80 Մահուան երկու երկարագուն վիճակ գցեղ նժարներում,
 Որոնցից մին Պելիսեանի, միւսն Հեկտորի՝ ձիահմուտ.
 Բարձրացրեց՝ միջից բռնած, և Հեկտորնան նժարն իջաւ
 Դէպի գժուկք. այդպէս նրան թողեց Գուշակն Ապօլլոնը:
 Եւ Աթենաս աստուածուհին՝ Սամակն հասաւ Պելիսեանին
 85 Ու նրա մօտ եկաւ, կանգնեց՝ թեաթուիչ խօսքերն ասաց.
 «Արդ յոյս ունեմ, վեհու Աքիլլէս, աստուածներին դու սիրելի,
 Որ մնծ պարծանքը կը վաստակենք միրմիդոնեան նաւատորմին՝
 Սպանելով քաջ Հեկտորին՝ անյազազոյն ուզմիկինն:
 Էլ չի կարող այսուհետեւ ազատ մնալ նա մեր ձեռքից,
 90 Որքան էլ որ կորովաձիգ Ապօլլոնը տանջանք կրէ՝
 Թաւալելով հօր ուպերին՝ ասպարափառ Շանթառաքի:
 Դու կաց այսուղ և ոգի առ, իսկ ևս գնամ Հեկտորի մօտ
 Ու նրա միտքն այնպէս շահնմ՝ մնայ քեզ հետ կորւ մղէ»:
 Այսպէս ասաց աստուածուհին, ու նա լսեց ուրախ սրտով
 95 Եւ այնակեղ պղնձատէդ իւր նիդակին կոթնած կանգնեց.
 Ու գիցուհին նրան թողեց, գնաց զիւցազն Հեկտորի մօտ
 Իւր հասակով, բարձրահնչւեն ձայնով նման Դէփորին,
 Գնաց, կանգնեց նրան մօտիկ, թեաթուիչ խօսքերն ասաց.
 «Ո՞հ, մնծ եղբայր, ինչպէս վազկան Աքիլլը քեզ նեղում է
 արդ
 100 Պրիամոսի ոստանի շուրջ վարժ ոտքերով հալածելով:
 Կանգնենք այսուղ և անյողդողդ դիմադրենք քաջազոյնին»:
 Աստուածուհուն սաղուարտածօծ Հեկտորն այսպէս պատաս-
 խանեց.
 «Իսկապէս դու, Դէփորի, ինձ սիրելի էիր փոքրուց
 Խեղճը մէջ, որոնց ծընան Պրիամոսն ու Հեկտէն.
 105 Եւ էնց այժմ էլ և՛ս առաւել պէտք է ես քեզ յարգեմ,
 պատուեմ».

Քանդի հէնց ևս աչքիդ ընկայ՝ դու յանձն առար իմ պատ-
ճառով
Պարիսպն անցնել, իսկ ուրիշներն այնտեղ մնում պարապից
ներս»:

Նրան Զեսի խաժակ դուստր Աթենասը պատասխանեց.
«Եղբայր, հայրս, արդոյ մայրս թախանձագին խնդրեցին ինձ
110 Եւ միասին փաթաթուեցին իմ ծնկներին, ընկերներս էլ
Պաղատեցին այնտեղ մնամ՝ բոլորն այնքան լիքն են անով։
Բայց քեզ համար իմ կրծքի մէջ հալումաշ էր սիրտս լինում։
Այժմ ուղիղ դէպի կուր, այսուհետեւ չխնայենք
Մեր նիզակներ, տեսնենք Աքիլլն սպանելով։
115 Արնոտ զէնքեր դէպ գոզաւոր նաւերն աւար պիտի տանի,
թէ գուցէ նա քո գեղարդով դիատապատ կընկնի գետին։
Այս էր խօսում նենդ դիցուհին, նրան տանում դէպի առաջ
Երկու քաջերն երբ զնալով նկան, հասան միմեանց մօտիկ,
Այս խօսքերը Աքիլլէսին կորդակախրոխտ Հեկտորն ուղղեց։
120 «Էլ չեմ փախչի ևս քեղանից, Պելսի որդի, ինչպէս առաջ
Շուրջ ոստանին Պրիամոսի երեք անդամ փախուստ առւի,
Քո յարձակմանց չդիմացայ, բայց արդ հոգիս յորդորեց ինձ
Ելնել անվախ քո դէմ կանգնել՝ քեզ սպանեմ, կամ ևս ընկնեմ։
Այլ այժմ եկ, աստուածներին անենք վկայ. նորա լինեն
125 Աղնիւ վկայք մեր երդումին և պահապան մեր դաշնակին։
Զինի մարմինդ անարգեմ ես, թէ Շանթառաքն ինձ շնորհէ
Այս կոուի մէջ յաղթութիւնը, և չինի հոգիդ առնեմ,
Այլ քեղանից չքնար զէնքերդ աւարելով, Աքիլլէս։
Տամ մարմինդ աքայեցոց. և դու պահիր մեր այս դաշնակ։»
130 Սրավագ Աքիլլն ակնարկելով ծուռ աչերով ասաց նրան.
«Ինձ հետ, Հեկտոր, անհաշո ոսոխ, պայմաններից մի ճառիր դու.
Զկայ երբէք ասիւծների և մարդկանց մէջ աննենդ դաշինք,
Եւ չեն կարող սրտանց, անկեղծ ընկերանալ դայլն ու դառ.
Յաէտ անհաշտ՝ պէտք է նորա չարիք նիւթեն մէկմէկու դէմ։
135 Այդպէս մեր մէջ և հչ մի սէր, ոչ էլ դաշինք կարէ լինել,
Որ մենք հաշուունք, մինչեւ մէկիս դին չի ընկնի թաւալգըլոր՝
Արեամբ յագուրդ տայ Աթէսին՝ մոլի, անսանձ ուազմիկին։
Ամեն տեսակ ուազմամիջոց նկատի առ. այժմ պիտի
Դու աւելի կորովաէկ և աննկուն կոուող լինես։
140 Ոչ մի փախուստ էլ քեզ չկայ. և Աթենաս Պալլասը քեզ
Շուրա իմ տէգով կընուածէ, և դու մէկէն կ'հատուցանես
Բոլոր տանջանքն ընկերներիս, որ կատաղած սպանեցիր։
Ասաց, ճօճեց երկայնաստուեր իրեն նիզակն ու շպրտեց,

Որը իսկոյն տեսաւ Հեկտորն ու խուսափեց նա՛ պանծալին,
145 Քանդի նստաւ ծնկանց վրայ, պղնձի տէգն անցաւ վերից,
Մեխուեց գետին, որ խելով Զեսի դուստր աստուածուհին,
Զիահմուտ Հեկտորից գազո՞ Աքիլլէսին մատուցեց։
Իսկ Հեկտորն անսաստելի Պելիսեանին այսպէս ասաց:
«Վրիպեցիր, ով Աքիլլէս աստուածանման. բոլորովին
150 Դու չիմացար բախտս Զեսից, թէս այգապէս ինձ ասացիր.
Բայց դու խարդախ և խօսքերով շաղակրատ դարձար իմ դէմ,
Որ իմ կորով ու քաջութիւն ես մոռանամ քո սարսափից։
Ես չեմ փախչի, և քո նիզակ թիկունքիս մէջ չես միսի դու.
Այլ ուղղակի առաջ շարժիք, կուրծքը միսիր յարձակուողիս,
155 Եթէ Սատուած տուել է քեզ Արդ խուսափիր պղնձի տէգէս,
Որ երանի ամբողջովին ընդունէիր քո մարմնի մէջ.
Այն ժամանակ քո սատակմամբ թիթհագոյն գուցէ լինէր
Մեր արովեանց պատերազմը, նրբանց շատ մեծ չարիք ես դու։
Ասաց, ձգեց երկայնաստուեր այն նիզակը ճօճելով
160 Եւ անվրէպ պրատին զարկեց Պելիսեանի վահանի,
Բայց զահանից տէգն յետ գարձաւ, ու զայրոյթով լցուեց
Հեկտոր,
Որ սրաթե իրեն նիզակն ի զուր թռաւ իւր բազուկից.
Կանգնեց, նայեց, խռովայոյդ, ուրիշ գեղարդ էլ չունէր նա.
Կանչում էր նա սպիտակասպար Դէմիփորին ուժգին ճայնով
165 Եւ նրանից նոր սուր նիզակ էր խնդրում, բայց նա չկար։
Հեկտորն իր մէջ ամենայն ինչ լաւ հասկացաւ և այս խօսեց.
«Վայ ինձ, ճիշ որ ամենազօր աստուածներն ինձ մահուան
կանչին.

Ես կարծեցի ինձ հետ է նա՛ աստուածազարմ Դէմիփորու.
Բայց պարսպի ներսումն է նա. Աթենասն ինձ մոլորեցրեց։
171 Եւ այժմ արդէն զարհուրելի մահն է ինձ մօտ, էլ չի դառնայ,
Պրծում չկայ, անշուշտ այսպէս վրձրուեցին աստուածները
Շանթառաք Զես և նետողը՝ նրա որդին, որ առաջուց
ինձ պահեցին սիրայօժար, խել արդ օրհամն համնում է ինձ։
Բայց ես ի զուր հող չեմ մտնի՝ բոլորովին անփառունակ,
175 Այլ մեծապանծ բան կը զործեմ յետնորդներին արթանալուր։
Այս ասաց նա և շպրտեց սուրը հատու վաղակաւոր,
Որ ձախ կողքից էր կախ տուել՝ մեծ ու ամուր և հոծանիւթ։
Կծկուելով թռաւ տեղից, ինչպէս արծիւ երկնաթոփչ։
Որ սեամած ամազ միջից դաշտ է սուրում, ասպատակում
180 Թափշտակէ մատաղ զամնուկ կամ նապաստակ՝ վախկոտ,
անսիրտ։
Նոյնպէս Հեկտորն առաջ թռաւ, մահու սուսեր շողացնելով.

Սլացաւ նաև քաջն Աքիլէս՝ սիրան ամեհի լի բարկութեամբ։
Եւ իւր լանջի առաջ պարզեց շքեղաշուք իւր վահանը՝
Զքնադագեղ արուեստակերտ, չորեխորան սաղաւարտը
185 Փայլակնացայտ տատանւում էր, սիրունափայլ ծփում էին
Ոսկեծամեր, որ Հնիփեստուն այնաեղ շինեց՝ խորաններում։
Ինչպէս մթին գիշերուայ մէջ սաստերի շարքն աստղ է փայլում
Գիշերավարն՝ երկնքի մէջ չքնազգեղ ու վառ սասդիկ,
Շողքեր էին ցայտում այնպէս սուր նիզակից, որ Աքիլէսն
190 Աստուածազարմ Հնկտորի գէմ ոճիր նիւթած ձեռն էր բռնել
Սիրուն իրանն արած նշան՝ զէնքի համար հեշտաթափանց։
Բայց նրա մարմինն ամրազովին զրահ էր պատել պղնձաճոյը
Եւ զեղեցիկ, որ Պատրուկից էր կողոպտել՝ սպանելով այն
կտրըծին։
Միայն անտեղ, ուր անրակներն յօդւում ուսից պարանոցին,
195 Կոկորդն էր բաց, որի մէջն է հողու կորուստն անդառնալի. լ
Նետեց այնուղ, ու նիզակով Աքիլէսը խոցեց նրան,
Եւ մահապիթ թոյնը մասաւ ձիշտ սպիտակ նրա վզի մէջ։
Բայց պղնձէ նիզակն այնքան չկարտեց նշափովը,
Որ նա խօսել, պատասխան տալ ամննեին չկարենար։
200 Գետին ընկաւ նա փոշու մէջ, պանձաց Աքիլէն աստուածա-
զարմ։
«Սպանեցիր Պատրուկիսին ու կարծեցիր նոզ կը մնաս։
Ինձնից էլ չփախնցար, երբ հեռացայ պատերազմից։
Յիմար ոսոխ, նրա համար մէծ գրիժասու՝ քեզանից քաջ
Այն գողաւոր նաւերի մէջ նրանից յետ ևս մնացի,
205 Որ ջարգեցի քո ծնկները։ Եւ այժմ քեզ շուն ու թռչուն
Քըզիկ—բըզիկ կը պատուեն, նրան թազեն աքայեցիք։
Վերջին չնշն հասած Հնկտոր, սալուարտածն այսպէս սասց։
«Պաղաստում իմ՝ սաներդ ընկած՝ ծնողներիդ, կեանքիդ սիրուն
Ինձ մի ձգիր միրմիդոննան չների գէմ՝ պատառելու,
210 Առատ պղինձ, թանկ սովիներ որբան կուղեռ, պահանջիր գու,
Քեզ կուղարկեն իրեր փրկանք իմ հայրիկը, արգոյ մայրս,
Միայն թէ իմ մարմինը դու դարձրցու նրանց, որ տրովացիք
Եւ արովուհիք վերջին յարգանք մատուցանեն՝ հրով այրեն։
Խէթ նայելով այսպէս սոսաց արագավազ Աքիլլը նրան։
215 «Զնոր ես զրկում ոտքերս, չնեն, ծնողներիս անուամբ ինզրում։
Թէ զայրոյթիս ականջ զնեմ, պատառ—պատառ կանեմ ես քեզ
Եւ կը լափեմ մարմինդ հում՝ ի արրիտուր արարքներից։
Մարդ արարած քո վիրայից լափող չներին չփ հալածի։
Այլ նոյն իսկ տասնապատիկ, քանապատիկ նոյնքան պարզե
220 Եթէ բերեն, այստեղ կշռեն և խոստանան ուրիշ շատեր,

Եթէ նոյնիսկ հրամայէ աղնիւ ոսկու հետ քեզ կշռել
Դարդանեանն Պրիամոս, նոյն իսկ յայնժամ մայր Հեկուրան
Քեզ քո մահուան մահճի վրայ էլ չի ողբայ, ծնունդն անիծի,
Այլ քեզ իսպառ կը ըըզկրտեն պատառ—պատառ շուն ու
թռչուն»։
225 Շունչը տալով՝ կորդակած Հնկտորը նրան կրկին սասց։
«Գիտէի քեզ, նախազգացի, որ երբէք իմ աղերսանքով
Զես քաղցրանայ, զի կրծքիդ տակ սիրտդ անշուշտ է երկաթի։
Բայց սպասիր, աստուածներին գուցէ դարձնեմ վրէժինդիր։
Այն օքը, երբ Պարիսը քեզ և գուշակն Ալօլլոն
230 Կոչնչացնեն քաջազգիթ Աքյական գաների մօտ։
Մինչ այս խօսքերն ասում էր նաև մահը եկաւ, նրան պատեց,
իսկ նրա հոգին անդամների միջից թռաւ իորքը գժուփի,
Ողբալով իւր բախտը դաժան, թողնելով ոյժ և քաջութիւն։
Նրան Պելեան Աքիլէսը և անչնչին այսպէս սասց։
235 «Մեռիր դու, իսկ իմ մահուան, երբ Շանթառաքն ուղարկէ ինձ
Եւ միւս անմահ աստուածները, այն ժամանակ առաջ կերթամ։
Սյապէս սասց և դիակից քաշեց պղնձի տէզը հանեց,
Ու նա մի կողմ շպրտեց այդ, արնոա զէնքերն ուսից վերցրեց։
Դէպի այդան զալիս էին աքայեցոց այլ զաւակունք։
240 Աքանչացած նայում էին զեղեցկութեան և հասակին
Այն Հնկտորի, որին ոչ ոք մօտ չէր կանփնում՝ շխոցելով։
Եւ մէկ մէկու ակնարկելով՝ նոքա միմեանց ասում էին։
«Այ քեզ զարմանք, այժմ Հնկտորն ինչ կակուզ է չօ-
շափելիս,

Քան երբոր նա նաւերի մէջ կրակ զցեց բոցավառած։
245 Այս էր ասում ամեն մէկը և մօտ գալիս՝ նրան խոցէ։
Իսկ քաջուն Աքիլէսը նրա վրից զէնքերն առաւ
Ու կանգնելով աքայեանց մէջ՝ թեսաթոփէ խօսքերն ասաց։
«Ո՞վ սիրելիք՝ քաջք աքայեանք, գուք Արէսի սէդ ծառաներ,
Քանզի սաստուածք ի վերջոյ ինձ չնորնեցին սրան յաղթել։
250 Որ չստ չարիք գործեց մեր գէմ, քան թէ բոլոր ուրիշները,
Դէհ եկեք շուտ գէպի քաղաքն անցնենք զինուած, հանդի-
սաւոր,

Որպէսպի մենք տեղեկանանք՝ ինչ միտք ունեն արովագացիք,
Թէ քաղաքի գղեակն արդեօք պէտք է զիջեն նրա մահով,
Թէ Հնկտորի մահից յետ էլ գեռ զիմանալ կը յանդգնեն։
255 Ինչու արդեօք իմ սիրտը ինձ այսպիսի միտք թելադրեց։
Անսուռք, անթաղ մնում է այնտեղ նաւերի մօտ մ'ոսած ընկեր
Պատրուկիսը, որին երբէք չեմ մոռանայ, քանի շրջեմ

Ողջերի մէջ և քանի դեռ ծնկներիս մէջ ոյժ կը լինի:
թէ իսկ մեռեալք գժոխքի մէջ կորցնեն իրենց յիշողութիւն,
260 Այստեղ էլ ես պէտք է յիշեմ մտերմագոյն իմ ընկերին:
Դէհ, զինուորներ աքայեցոց, նուագենք պէտան յաղթական
Ու յետ դառնանք՝ սրան տանելով դէպ խորափոր նաւա-
տորմիզ:

Մւծ է պատիւ մեր յաղթութեան. սատակեցաւ դիւցազն
Հեկտոր,
Որին տրովեանք ոստանի մէջ պաշտում էին Սստըու պէս:
265 Այսպէս ասաց, Հեկտորի վրայ շատ անպատիւ բան կա-
տարեց.

Նրա Կրկու ոտքը ճեղքեց ջղերի տակից՝ կրունկներից
Մինչ կոճեր, և նրանց մէջ կաշէ խրացք անցկացրեց,
Կապեց նրան անուակառքից, իսկ գլուխը թողեց քարշուի,
Եկաւ, կանդնեց կառքին մօտիկ և պերճափայլ գէնքերն առաւ
270 Ու մտրակեց նժոյգներին, և ոլացան արագավազ:

Եւ քարշուողի թանձր փոշին ամպէր կազմում, ու ու գէսերն
Այստեղ-այնտեղ թափուում էին, և փոշու մէջ զլուխը քաշուում:
Որ գեղեցիկ էր երբեմն, բայց Զեսն այսօր մասնեց նրան
Ոսորիներին՝ անարգելու իւր հայրենի աշխարհի մէջ:

275 Այսպէս նրա գլուխն ամբողջ փոշու մէջ էր: Այդ ժամանակ
Մայրը իրեն վարսը փետեց և զէն ձգեց զարդարուն քօղն
Ու նայելով իւր որդեակին՝ գումար ուժին, մեծակական.
Ողորմագին լաց էր լինուում սիրելի հայրն, ու ժողովուրդն
Ամբողջ ողբում, հասաշանքի ձայն էր հնչուում ողջ քաղաքում:

280 Նման էր շատ այդ անսարան, կարծես իլիոնն բարձրայօն
պէտք է հիմքից հարթայատակ հրդեհակէղ ոչնչանար:
Ամբոխն հազիւ էր կարենում այդ տիրալից ծերին բռնել,
Որ դարդանեան դարպաներից դուրս ելնելու ճիգ էր թափում:
Աղաչում էր՝ թաւալելով քակորների, աղբերի մէջ,

285 Ամեն մէկի անունն ասում՝ այս խօսքերով աղաչնով.
«Հեռու ինձնից, թողէք մենակ, որքան էլ որ դուք վշտանաք,
Այս քաղաքից թողէք ենեմ՝ զնամ նաւերն աքայեցոց,
Կը պաղատեմ ես այն մարդուն՝ եղեռնաւոր և ոճրագործ,
Գուցէ քաշուի իմ հասակից և ողորմի ալիքներիս,

290 Քանզի նրա հայր Պելիսն էլ անտարակոյս է այսպիսի,
Որ նրան ծնաւ և մնուցեց՝ պատիժ դառնայ տրովագացոց,
Եւ մանաւանդ աւելի ինձ, քան բոլորին՝ ցաւ ու մորմոք:
Քանզի քանի մատաղահաս զաւակներիս զրկեց կեանքից,
Եւ բոլորին այն աստիճան ես չեմ ողբում կսկծելով,

295 Ինչպէս մէկին, որի ժանա սուզն ինձ պիտ գտոնիք իջեցնի.
Իմ Հեկտորին Երանի նա գոնէ մեռնէր իմ զրկի մէջ.
Քանզի յայնժամ կըյագենայինք մեր ողբերով, արտասուքով,
Ե՛ւ ես, և նա, որ ծնաւ նրան՝ թշուառական մայրը նրա:
Այս էր ասում լալահառաչ, հեծում էին քաղաքացիք:
300 Իսկ կանանց մէջ նախ Հեկտորէն սկիզբ դրեց հեկեկանքին.
«Որդեակ, ինչո՞ւ էլ ապրեմ ես այսուհետեւ տառապալից,
Երբ գու մեռար, իմ սիրելիս, որ ինձ համար գիշեր-ցերեկ
Պարծանք էիր իլիոնի մէջ և քաղաքում ողջին թիկոնք՝
Տրովագացոց և արովուհեաց՝ աստըծու տեղ պաշտողներիդ,
305 Քանզի նոցա ծյամարիտ որ պարծանք էիր դու քո կեանքում:
Իսկ այժմ արդէն ահաւասիկ օրհասն ու ման աիրել են քեզ:
Այսպէս ասաց նա ողբալով: Հեկտորի կինն ամեննեին
Բան չէր լսել, մի լրաբեր չեկաւ նրա մօտ ճիշտ լուր
աւլու,
Թէ ամուսինն այնտեղ՝ գաշտում գոմերից դուրս է մնացել,
310 Այլ պալատի վերնատան մէջ իւր պատմումանն էր նա գործում
Երկու տեսակ, աչքը խաղող և գունագեղ նկարազարդ:
Սպարանքում պատուիրել էր իւր վարսագեղ նաժիշտներին
Շուտով մի մեծ եռոտանի դնեն վառուն կրակի վրայ
Զուր տաքանայ՝ կոռւից յետոյ քաջ Հեկտորին՝ լողանալու:
315 Ո՞վ միամիտ, չէր իմանում, թէ շատ հեռու լողարանից
Աքիլլէսի ձեռքով նրան ընկեց արդէն դուստրը Զեսի.
Յանկարծ լսեց աշտարակից գուռում-գոչիւն և ողբաձայն.
Անդամները ողջ գողացին, կըկոցն ընկաւ նրա ձեռքից,
Եւ անհանդիստ նա ձայն տուեց գեղագանգուր նաժիշտներին.
320 «Դէհ, երկուսով եկէք ինձ հետ, զնամ տեսնեմ ինչ պատահեց.
Իմ պատուական սկեսուրի ձայնն եմ լսում. և կրծքիս մէջ
Սիրաս գալիս է բերանս, ու ծնկներս թուլանում են:
Պրիամոսի որդոց անշուշտ արդ մեծ փորձանք է սպասում:
Հեռու ինձնից այդպիսի լուր. բայց սոսկալի միաք եմ անում:
325 Չ'լի խիզախ Հեկտորին արդ գիւցազն Աքիլլ հեռացնելով
Պարիսաներից մեն-միայնակ՝ հալածում է դաշտի վերայ.
Գուցէ արդէն նուաճել է այն անողորմ քաջութիւնով.
Որ միշտ նրան կեանք է տալիս: Նա չէ մնում բաղմութեան
մէջ,
Այլ համարձակ առաջ սուբում և ոչ ոքից յետ չի մնում:
330 Այսպէս ասաց ու դուրս թռաւ տանից՝ նման Մենադային.
Դողում էր սիրան ու յետելից զընում էին զոյտ նաժիշտներ:
Իսկ երբ հասաւ աշտարակին և միմեանց մօտ խմբուած
մարդկանց,

Նա կանգ առաւ պարսպի մօտ, աչքը պատեց, տեսաւ նրան. Քաղաքի դէմ քարշում էր նա, և նժոյգներն արագընթաց
335 նրան անխիղճ ձգում էին դէպ աքայեան սրաթեն նուեր: Խաւարամած մութը իսկոյն պատեց նրա պայծառ աչեր, Գլորուեցաւ դէպի յետե, շունչը կարծես արդէն փչեց. Պերծապասկ շքեղ զարդեր ընկան հեռու նրա գլխից՝ Ապարօչն ու ծամակալ և հիւածոյ սիրուն երիդն
340 Ու քօջն, որ սակեղինիկ Սփրոդիտէն էր չնորհել Այն օրը, երբ սազուարտածօձ Հեկաորը նրան էտիովնի Տանից բերեց, մեծ զլիսազին տալով նրա ծնողներին: Նրա չորս կողմ խեռնուել էին նրա տալեր, ատզեր կանայք, Բռնում էին չնչասպարին, որը մարում էր մահամերձ:
345 Երբ նա կրկին սկսեց հաշել, ինելքն հաւաքեց ուշքի եկաւ, Սրտասուախեղի կոծ անելով կանչեց արովեանց կանանց միջից.
«Հեկատնը, վայ ինձ տարաբախտիս. ուրեմն մի բախտով ծնուանկ»
Թէ զու, թէ ես, զու Տրովայում, Պրիամոսի ապարանքում,
350 ես Թերէում, անտառախիտ Պլակայ սարի ստորոտում, Գչտիոնի յարկի տակին, որ մնուցեց ինձ փոքրիուց՝ Այն եղկելին՝ ողորմելում. երնէկ բնաւ ինձ չէր սրնած: Իսկ արդ ուղիղ Սիդի մօտ՝ մթին խորշեր երկրի խորքում Գնում ես զու, և ինձ այրի, ծանրաթափիծ սպով թուլցած Թողնում ես քո ապարանքում, և մանուկիս մատաղահաս,
355 Որին ծնանք մնաք երկուսով՝ թշուառներս. նրա համար Բերկրանք, Հեկատնը, էլ չես լինի, քանդի մեռար. ոչ էլ նա քեզ. Քանզի թէկուզ նա ազատուի աղէտաքեր՝ աքեանց կառից Ցաւ, տառապանք ապագայում միշտ նրա հետ պիտի լինեն. Քանզի օտարքը պէտք է խլեն արտերն անբախտ որրի ձեռքից:
360 Կորցնում է նա իւր մանկութեան ընկերներին որք ժամանակ, Նա շարունակ զլուխը քաշ, նրա աչերն արտասուալից: Խիստ չքաւոր՝ զիմում է նա իւր հայրիկի ընկերներին, Քաշում մէկի վերարկուից, միւսի զգեսաից կախի է ընկնում: Մէկը նրան ողորմում է, քիչ խըմելու ջուր է մնենում,
365 Որ շրթներն է հաղիւ թրջում, քիմքը բնաւ թաց չի անում: Յաճախ նրան խրախճանից երջանիկ ոմն հանում է գուրս, Բոռնցքներով գանակուծում և հալածում հայհոյելով. «Կորիր գնա, քո հայրը մեր կերուխումից հեռու է շատ»: Եւ լալազին յետ է գտանում, այրի մօր մօտ գնում մանուկն—
370 —Աստիանաքս, որ երբեմն ծնկանց վրայ իւր հօր զրկում Ուղեղով էր կերակրուում և պարաբակ գտան մասով:

Իսկ երբ յոզնած իւր խաղերից՝ նինջ առնելու էր գընում նա,
Մահճում անուշ քուն էր մտնում՝ իւր դայեակի ծոցը մտած՝
Կակուղ, վիզուած անկողնու մէջ՝ փափկութիւնից սիրան
զմայլած։

Իսկ այժմ շատ պիտի տանջուի՝ զրկուած իրեն քաղցր հօրից—
—Աստիանաքսն—ինչպէս սրան արովագացիք են անուանում.
Զի միայն դու էիր պահում նոցա բարձր դուռն ու պարիսպ։
Իսկ արդ հեռու ծնողներից, մահիկաձե նաւերի մօտ
Զեռուն որդունք կուտեն մերկիդ, երբ շունք քեզնով կը յա-
գենան,
Մինչ պալատում որքան զգեստ կայ մթերուած քաջիդ համար
Նուրբ, վայելուչ գործած, հիւսած արովեանց կանանց ճար-
պիկ ձեռքով։
Բայց այդ ամենն ես բոցավառ կրակի մէջ պէտք է նետեմ,
Քանզի բոլորն էլ քեզ պէտք չեն և էլ երբէք դու չես հագնի։
Տրովագացոց աչքի առաջ ի փառ քո պիտի այրեմ։
Ալայէս ասայ նա ողբարով, շուրջը կանալք կոծում էին,



and the other side of the page.

11

12

13

14

15

16

17

18

19

20

21

22

23

24

25

26

27

28

29

30

31

32

33

34

35

36

37

38

39

40

41

42

43

44

45

46

47

48

49

50

51

52

53

54

55

56

57

58

59

60

61

62

63

64

65

66

67

68

69

70

71

72

73

74

75

76

77

78

79

80

81

82

83

84

85

86

87

88

89

90

91

92

93

94

95

96

97

98

99

100

101

102

103

104

105

106

107

108

109

110

111

112

113

114

115

116

117

118

119

120

121

122

123

124

125

126

127

128

129

130

131

132

133

134

135

136

137

138

139

140

141

142

143

144

145

146

147

148

149

150

151

152

153

154

155

156

157

158

159

160

161

162

163

164

165

166

167

168

169

170

171

172

173

174

175

176

177

178

179

180

181

182

183

184

185

186

187

188

189

190

191

192

193

194

195

196

197

198

199

200

201

202

203

204

205

206

207

208

209

210

211

212

213

214

215

216

217

218

219

220

221

222

223

224

225

226

227

228

229

230

231

232

233

234

235

236

237

238

239

240

241

242

243

244

245

246

247

248

249

250

251

252

253

254

255

256

257

258

259

260

261

262

263

264

265

266

267

268

269

270

271

272

273

274

275

276

277

278

279

280

281

282

283

284

285

286

287

288

289

290

291

292

293

294

295

296

297

298

299

300

301

302

303

304

305

306

307

308

309

310

311

312

313

314

315

316

317

31



ԳՐԱՆ Ե 5 ԿՈՊԵԿ

ՀՀ Ազգային գրադարան



NL0317519

8932

88

2 - 78